բով Քարբերդ և անտի Տրապիզոն գնացած են: Այժմ կիմանամք թէ Եուսուֆ-փաշան իւր առնելիք հրամանաց սպասելով Տրապիզոն կը մնայ, իսկ Սարգիս էֆէնտին Կ. Պոլիս վերադարձած է:''

Պոլսոյ կողմն Համիտիէ անուն կայսերական դամբարանը կողոպտող աւազակները դեռ չեն բռնուած: Բայց Բէրայի ոստիկանութեան գլուխ Պահրի փաշան գողցուած գոհարեղէններէն մին երեկ Բէրա ոսկերիչի մը քով տեսնելով, իւր ստակով գնած և ոստիկանութեան պաշտօնատունը տարած է. կը կարծուի թէ այսպէս աւազակաց հետքը գտնուած է:

Կիրակի օրը Պէկլէրպէյի անտառին մէջ մարդու մը դիակը գտնուեցաւ: Ոստիկանութիւնը քննութիւններ և խուզարկութիւններ ընելու վրայ է:

Ոստիկան գլխաւորաց գնդապետ Թահիր պէյ, որ երկար ժամանակ Հնդկաստան բնակած է, յիշեալ երկրին պատմութիւնը պիտի հրատարակէ թուրք լեզուաւ:

Քաղաքապետութեան երկու պաշտօնեայ Եյուպի մէջ կաշառառութիւն ըրած լինելով, պաշտօնանկ եղան և դատաստանի պիտի ենթարկին:

Սօֆիա նստող Ռուսական գործակատարը Պուլղարիոյ առաջին նախարար Պ. Ցանքօֆի ձեռամբ Աղէքսանդր իշխանին արկղիկ մը ղրկած է, որոյ մէջը կային Թանգագին բաներ:

Պէլճիքայի Պրիւսէլ մայրաքաղաքին անցեալներն նուագահանդէս մը տրուելով ի նպաստ Ասիոյ սովելոց, հանդիսին մասնաժողովը Ս. Պատրիարքին ոսկի շքադրամ (մէտայլ) մը նուիրել արժան դատելով, յանձներ է զայն Պրիւսէլի Օսմանեան դեսպանին, որ Բ. Դուռը ղրկելով զայն, Բ. Դրան կողմէն ալ Գալիատիս պէյ և Յովհաննէս Թորոսեան էֆ. չորեքշաբթի օրը պաշտօնապէս Խասգիւղ Ս. Պատրիարքին տունն երթալով Ն. Սրբազնութեան կը յանձնեն յիշեալ ոսկի շքադրամը՝ որոյ մէկ կողմը գրուած է ,,ի յիշատակ նուագահանդիսի ի նպաստ սովելոցն Ասիոյ'' և միւս երեսն ալ ,,տուեալ առ Ներսէս Պատրիարքն Հայոց'':

(Մասիս)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Կատարօից ,,Polit. Corresp.'' լրագրին գրում են հետևեալը նոյեմբերի 19-ից: Դերվիշ-փաշա պատրաստվել է շրջապատել և պաշարել Դուլցինիօ: Հաւատացնում են, որ նրան աջողվել է փակել Դուլցինիօի մէջ ալբանացիներից նրանց, որոնք ընդդիմանում են Դուլցինիօի յանձնելուն: Այս գործի նպատակն է խանգարել ալբանացիների նորեկ բազմաթիւ խումբերին միանալ իրանց ազգակիցների հետ: Այս կարգադրութիւնը աջողութիւն ունեցաւ, որովհետև ալբանացիները չափազանց վրդովված են, թէպէտ նրանց և Թիւրք կանոնաւոր զօրքերի մէջ կռիւ չէ պատահել: Միացեալ նաւատորմի հրամանատարները յայտնեցին ծովապետ Սէյմուրին, որ նրանք հարկաւոր դէպքում օգնութիւն կը հասցնեն չերնոգորիական իշխանին, երբ նա կը սկսի գրաւել Դուլցինիօ:

Նոյն լրագրին հաղորդում են Ս. Պետերբուրգից հետևեալը: Եւրոպան անհամբերութեամբ սպասում է Դուլցինիօն չերնոգորցիներին յանձնելու լուրին: Իւրաքանչիւր շաբաթ Կ. Պոլսի մէջ նոր ժամանակամիջոց են որոշում, բայց գործը առաջ չէ գնում: Այս հանգամանքը ապացուցանում է, որ Թիւրքերից ոչինչ չէ կարելի ստանալ, մինչև նրանց վրա զօրեղ ճնշում չը գործեն: Առաջ երբ Դուլցինիօի գործը դժուարացաւ, Ռուսաստանին մեղադրում էին, իբր թէ նա է դժուարութիւններ ծագեցնում Ցետինիէի մէջ: Այդ լուրերը մի քանի ժամանակից այլևս չեն տարածվում: Մի քանի շաբաթներ անցել են և Թիւրքիան ոչինչ չէ անում, բաւականանալով դատարկ խոստումներով: Դուլցինիօի գործը ոչ թէ Ռուսաստանն է դանդաղեցնում, այլ այն Թիւրքասէր ճառերը, որոնք արտասանվում են եւրոպական զանազան պարլամէնտների մէջ, մինչդեռ յայտնի է, որ Թիւրքաց կառավարութեանը մի քաջալերական բառն էլ բաւական է ընդդիմադրութիւնը շարունակելու համար: Ինչպէս Ռուսաստանը առիթ չունէր Դուլցինիօի գործի ուշանալու պատճառով եւրոպական միւս պետութիւններից աւելի տրտնջել: Ընդհակառակը Ռուսաստանը աւելի պէտք է ուրախանար գործի յետաձգվելու պատճառով, եթէ նա ճշմարիտ հետևում էր մաքիավելական քաղաքականութեանը: Ռուսաստանը այնքան համակրում է Չերնոգորիային և այնքան յարգում է Եւրոպայի հեղինակութիւնը, որ բոլոր միջոցները գործ է դնում Դուլցինիօի գործը վերջացնելու համար: Եթէ մինչև անգամ գործը յետաձգվի, այնուամենայնիւ դա երկարատև չի լինի և արևելեան գործերի հետ ծանօթ անձինք հաւատացած են, որ Թիւրքիայի իւրաքանչիւր չը բժշկված վէրքը ժամանակով աւելի էլ վնասներ կը տայ: Հաւատացած լինելով, որ Թիւրքիայի քայքայումը անխուսափելի է, Ռուսաստանը պէտք չունի մանր խնդիրների դիմել, քանի որ ինքը հարկաւոր ժամանակ իւր շահերը պաշտպանելու համար բաւական ոյժ կունենայ: Եթէ եւրոպական պետութիւնները կամենում են ապագայ անկարգութիւնների առաջն առնել, Ռուսաստանը միշտ պատրաստ է նրանց օգնութիւն հասցնել:

Լոնդոնի ,,Standard'' լրագրին Կ. Պոլսից գրում են հետևեալը նոյեմբերի 17-ից: Երբ ալբանացիները տեղեկացան, որ Բ. Դուռը վճռել է յանձնել Դուլցինիօն չերնոգորցիներին, նրանք Ալի-փաշայի նախագահութեամբ մի մեծ ժողով կազմեցին և հետևեալ վճիռները կայացրին. 1) Դուլցինիօն երբէք չի յանձնվի չերնոգորցիներին, 2) իւրաքանչիւր ալբանացի պարտաւոր է վերադարձնել Բ. Դրանը իր ստացած ատրճանը կամ շքանշանը և նորերը չընդունել. 3) պէտք է պատժվեն բոլոր այն առաջնորդները, որոնք ալբանական միութեանը անհնազանդ կը գտնվեն և նրա հրամանները չեն կատարի: Բացի այս ժողովը վճռեց խնդրել սուլթանից Ալբանիայի ինքնավարութիւնը: Րիզա-փաշա այս անցքերը չէր հաղորդում Բ. Դրանը մինչև սուլթանից ֆերիկի աստիճան չը ստացաւ: Ասում են, որ Դերվիշ-փաշան էլ նոյն ուղղութեամբ է գործում: Ալբանացիները երդվել են, որ մի կտոր չեն տայ Չերնոգորիային, կամ Յունաստանին:

Լոնդոնի «Daily News» լրագրին հեռագրում են, որ Դերվիշ-փաշա մտադիր է հրաժարական տալ, որովհետև ալբանացիները յայտնել են, թէ նրանց 'ի զուր են ժողովում, որովհետև նրանք չեն կամենում ոչ մի խորհուրդ ստանալ Դերվիշ-փաշայից:

Գերմանական լրագիրներից մէկին հեռագրում են, որ ամեն րոպէ սպասվում է Դուլցինիօի յանձնելը չերնոգորցիներին: Որովհետև քաղաքը լաւ պաշարված էր, նրա մէջ պակասեցան կենսական պիտոյքները: Ալբանացիները հարիւրներով թողնում են քաղաքը և հեռանում են իրանց բնակարանները, մինչդեռ քաղաքի մէջ մտնելը ամենքին արգելված է:

Իտալական «Diritto» լրագիրը նոյեմբերի 17-ին մի յօդուած էր տպել, որի մէջ ասված է, թէ սուլթանից ուղարկած հեռագիրները Գլադստոնին ոչնչով չեն զանազանվում Բ. Դրան նախկին խոստումներից: Այնու ամենայնիւ Անգլիան դեռ էլի մի քանի օր կը սպասէ և եթէ Թիւրքիան չի կատարի իւր խոստումները, այն ժամանակ Գլադստոն կառաջարկի եւրոպական պետութիւններին որ և է միջոց գտնել ներկայ դժուարութիւնների առաջն առնելու համար:

Տէօդօից լրագիրներին հաղորդում են, որ միացեալ նաւատորմի վրա եղած ծառայողների դրութիւնը վատ է: Առաջ նրանք անհամբերութեամբ սպասում էին, որ կըռիւ սկսվի, բայց շուտով նկատեցին, որ հարցը օրից օր յետաձգվում է: Այժմ լուր է տարածված, որ նաւատորմը դեռ էլի երկու ամիս կը մնայ իւր տեղ անգործ և ամենքը անտարբեր և ձանձրացած են: Այդ անգործութիւնն է պատճառ, որ անդադար այս և այն պետութեան նաւերի վրա ծառայողները միմեանց հետ անբաւականութիւններ են ունենում:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Վան, նոյ. 16/28 1880

Հարստահարութեան և բռնութեան հետևանքը միշտ յեղափոխութիւն է. սա պատմական ճշմարտութիւն է, որոյ ոչ ոք կրնայ հակառակիլ: Անցեալ աղէտալի պատերազմի առթիւ երբ եւրոպական ազգաց և տէրութեանց ուշադրութիւնը գրաւեց ընդհանուր կերպով Հայաստանի հարստահարեալ և բազմաչարչար ժողովրդոց տրխուր և անտանելի վիճակը, շատ մը օտար լրագիրք սկսան հայկական ընդհանուր ապստամբութիւն մը խիստ մօտալուտ նկատելով, բարենորոգմանց անյապաղ գործադրութիւնը պահանջել և մինչև անգամ պ. Հէնրի Լէյըրտ քանիցս պաշտօնապէս Թուրք կառավարութեան ազդարարեց թէ Հայաստանում գործադրելիք բարենորոգումները եթէ ալ ևս յապաղին, Պուլկարական խնդրոյն համանման հայկական խնդիր մը յառաջ պիտի գայ. Նորա մարգարէական գուշակութիւնը այսօր ամեն մարդ կարող է արդէն կատարուած համարել: Հայկական խնդիրը այսօր բոլորովին պաշտօնական հանգամանք մը առած է և Հայաստանում տիրող անիշխանութիւնը և հարստահարութեան շարունակութիւնը հայկական ապստամբութեան գոյութիւն տուած է. Վասպուրական, Մուշ, Բաղէշ, Կարին արդէն ունեն յեղափոխական մասնաժողովներ, որոնք գաղտնի միջոցներով աշխատում են գործակից լինել Հայկական ընդհանուր ապստամբութեան ի Հայաստան: Թէ գործերն ինչ կարգի մէջ են Հայաստանի միւս գաւառներում ոչ ոք գիտէ այս րոպէիս մեր կողմերը, քանզի թղթատարական և հեռագրական յարաբերութիւնք ժամանակէ մի վեր խիստ անկանոն կերպով կատարվում են և կառավարութիւնը հայոց վերաբերեալ լրագիր, նամակ կամ հեռագիր ձերբակալում է. Գալով Վասպուրականում վերջերս տեղի ունեցած շարժմանց, թէ քաղաքում և թէ գիւղերում, ամեն տեղ, հայ ժողովուրդը արթնցած է և պատրաստվում է իր գոյութիւնը զինու զօրութեամբ հայրենի երկրում պաշտպանելու. ի հարկէ խոհեմութիւնը չը ներէր այժմ մեծ ցոյցեր ընել կառավարութեան դէմ՝ նորա ուշադրութիւնը չը գրաւելու համար. արդէն կառավարութիւնը Շէյխ Իպատուլլահի ապստամբութիւնը պատրուակ բռնելով, բազմաթիւ զօրաց խումբեր բերում է Վասպուրական, որոնք ճնշում, հարստահարում և նեղում են խեղճ գիւղացի հայերին:

Տեղական Թուրք վարչութեան ըրած զրկանքները, բռնութիւնը և անիրաւութիւնը մղում և ստիպում են ժողովուրդը զէնք վեր առնելու և թշնամեաց հետ անձամբ անձին մարտնչելու, ինչպէս որ մի քանի օր առաջ Կարճկանում, ուր 16 հազար հայեր կան, պատահած դէպք մը զայս կապացուցանէ: Այդ գաւառացի միւտիրը հարստահարիչ և կեղեքիչ բարբարոս անձ մ'ըլլալով, ժողովուրդը բոլորովին զզուած էր նորանից և սպասում էր մի պատեհ առթի նմա ցոյց տալու իր զզուանքը գործնականապէս: Այսպէս անցեալ երկուշաբթի օր ժողովրդէն կորիճ երիտասարդներ յարձակում ըրին Թիւրքերի վրա և ծեծեցին զայն ու իր ժանդարմները, որոնցից մէկ քանին վիրաւոր ընկան: Այս ընելէ ետքը նոքա քաղաք գալով բողոքեցին Անգլիոյ հիւպատոս կապիտան Կլէյթընի, ցոյց տալով նրա որ միւտիր դնելով գիւղերում պէտք էր մի բարեկարգութիւն լինէր տաճկաց խելքով, բայց այժմ յետինն քան զառաջինն վատ եղաւ: Նոյնպէս Նորդուզի Գողան գիւղի հայեր անցեալներում մի կռիւ ունեցան 140 զինեալ քուրդ աւազակների հետ, որոնք եկած էին գիւղը աւարի առնելու: Հայեր իրենց Մէլիքի և վարդապետի առաջնորդութեամբ յարձակում մ'ըրին քուրդերուն վրայ, 4—5 ժամ պատերազմելով յաջողեցան վանել աւազակները, որոնք 30-ի չափ մօտ մեռեալ և վիրաւորեալ թողլով իրենցմէ փախան: Հայոցմէ մէկ սպանուած կար և մի քանի վիրաւորեալ, ո՛մք, լսածիս նայելով, յետոյ մեռան: Դարձեալ նոյն գիւղի բնակիչք կռուեցան այս օրերս քուրդերու հետ, որոնք եկած էին նրանց արտերը բռնութեամբ հնձելու, ինչպէս որ նոքա միշտ սովոր են ընել. գիւղի քահանան անմիջապէս ժողովուրդի գլուխն անցած դիմաւորեց քուրդերին և հայք սկսան կրակ ընել նոցա վրայ, որոնք պարտաւորեցան ամենայն ինչ թողլով փախչել:—Վերջին լուր. Պաշքալէի հայոց առաջնորդը, գերապատիւ Յովհաննէս վարդապետ Քաջունի, խումբ մը հայերու գլուխն անցած ս. Բարթուղիմէոս վանքի մօտերն աւազակաց խումբի մը հետ պատերազմեցաւ: Քուրդերից մինը սպանվեցաւ և երկուք ալ ծանր վէրքեր առին քաջամարտիկ հայ հոգևորականի ձեռամբ: Այս դէպքեր թէև մեծ բաներ չեն, բայց ապացոյց մ'են թէ Վասպուրականում հայք շարժվում են, ինքզինքնին պաշտպանելու ձեռնարկում են և Աստուծով նոքա հետզհետէ աւելի մեծ գործեր պիտի տեսնեն, երբ ժամանակը գայ: Այժմ բոլոր հայ ժողովուրդը յուզեալ է. ամեն մարդ լաւ հասկացած է որ Հայկական խնդիրը պիտի չը կարգադրուի առանց հայաստանցի հայոց գործնական մասնակցութեանը. վանորոյ խումբեր կազմվում են և ամեն մարդ աշխատում է ի մօտոյ տեղի ունենալիք պատմական մեծամեծ և քաղաքական եղելութիւններում իր մասն և բաժինը ունենալու, միայն բան մը կը պակսի, այն է դրամ, որով հնար է միայն հարկ եղած պատրաստութիւնները այժմ ընել:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 նոյեմբերի: ,,Голосъ'' լրագիրը հաղորդում է, որ սկզբունքով վճռված է [illegible] վրա հարկ դնել: ,,Новое Время'' լրագիրը հաղորդում է, որ վճռված է աւելացնել նահանգապետների ռոճիկները: ,,Herold'' լրագիրը հաղորդում է. [illegible] մէջ [illegible] և մի կին [illegible] են Ս. Պետերբուրգ: Լսվում են, որ երկուսն էլ նշանաւոր պետական յանցաւորներ են: Օտար դաւանութիւնների բաժինը աւելացնում է, որ [illegible] պաշտօնեաներից [illegible] շատանան:

Կ. ՊՈԼԻՍ, 19 նոյեմբերի: Չերնոգորիական իշխանը ներեց Պոդգորիցայում կալանաւորված մահմեդականներին: Սուլթանը հրամայեց մի նոր մասնաժողով նշանակել Վլի-Մահմեդի մահուան [illegible] քննելու համար: Մասնաժողովի անդամներից երկուսը Բեյեր և Հորտար [illegible] են: Այսօր մասնաժողովի առաջին նիստն է լինելու:

Խմբագիր—հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ